

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ENCYCLOPEDIA

(مجموعه علوم)

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 4

1898 ՄԱՐՏ 28

Ամէն տեղի համար Տարեկան կանխիկ 50 դահ. վեցամսեայ 25, իսկ եռամսեայ 13 դահ: Օտար երկրաց համար Տարեկան կանխիկ 15 Ժրանք: Թղթաւորի ծախքը խմբագրութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բով ալ կ'ընդունուի 100 դրուցի տեղ 110 դրուց:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

Ղ. ԲՈԼԱՏ

ՏՆՕՐԷՆ

Վ. Գ. ԶԱՐԳԻՍԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻՋՐԱՆ ԶՈՎՋԱՆՆԵՍԵԱՆ — Ստուգաբանական բառարան:

ԳԱՌՆԻԿ ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ — Հայ լեզու:

ԲԱՐՈՂ — Վարագոյրին ետեւէն — «Սիրելի բարեկամ»:

Ն. ԹՈՔԱԹԼԵԱՆ — Ժողովրդական իրաւաբանութիւն:

Վ. ԹՈՎՄԱՍԵԱՆ — Հայի ամուսնութիւնը, Ծայրագոյն Արեւելքի կեանքէ:

Ն. ՊԵՐՃ — Անքունութիւն:

Ղ. ԲՈԼԱՏ — Պարտիզականական — Գաղնասունի եւ իր մշակութիւնը:

Ղ. ԲՈԼԱՏ — Պարտիզականներու համար — Խլուրդ (քէօսթէպէկ):

ԱՐԱՔՍԻ — Աւտին տնտեսականք — Մաղիկները թարմ պահելու համար — Մօրիւ ձկան իւղին համը վերցնել:

ՏԱՆՏԻԿԻՆԸ — Խոհանոցի բաժինը — Խեցիկի բլաքի:

Թղթակցութիւններ եւ պատասխաններ:

Հատը 40 փարայ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԹԷՐ

اختر مطبعه — ابوالسود جادستده نومرو ٥٤

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱՌԱՔԷԼ ԷՖ. ԹՕՂԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապը-Ալի ճառտեպի քիւ 46

Սոյն գրատան նոր հրատարակութիւններէն ստացանք.

1. Միրադ Զիւպոտէի Մուքաբէրաթ վէ Մուհարրէրաթ, Գանունը ճէզա գըամը — գործ Փաստաբան Մէհմէտ Ռիֆաթ է-Ֆէշտիի: — Սոյն գրքին մէջ՝ ամեն ոք կրնայ գտնել Օրինագրքին ճէզաի մասին բոլոր յօդուածները. Զէյլերը, Իլավէները, Թէզքէրէի Ատիլէները եւ Թէզքէրէի Սամիներ, եւայլն եւայլն:

Կարծէ ունենալ, գինը 5 զրուշ է գաւառներու համար 6 զրուշ:

2. Օսմաներէնի ուսուցիչ Իգնատիոս էֆ. Սարայտարեան երկասիրած է, Արաբերէն լեզուի Գերականութիւն մը. Մուֆասսալ Սարֆ Արապի, արդիւնք բազմամեայ հմտութեան եւ աշխատութեան:

Գինը 12¹/₂ զշ. գաւառներու հմր. 14¹/₂ զշ.

ՆԱՄԱԿԱԴՐՕՇՄՆԵՐ (ՓՈՒԼ)

Եթէ կուզէք բացէն շահ մը, չի յուսացուած բանէ մը կոկիկ դրամ մը վատորկիլ, պրպտեցէ՛ք փոշիի ներքեւ մնացած սնտուկները փնտռեցէ՛ք, նամակներ, որոնց վրայ սյլելալ զոյներով նամակադրօշմներ պիտի գտնաք: Ահա ասոնք են ձեզ բացէն դրամ բերողը:

Այն աստե՛ն եթէ դիւրութիւն ունիք զանոք շրկեցէ՛ք թերթիս խմբագրատունը, ուր ձեզ կը վճարուի կամ կը շրկուի նուցա արժած գինը, եւ կամ իմացուցէ՛ք մեզ, եւ ձեզ դիւրին միջոցներ կը ցուցնենք մեզ հասցնելու համար:

Մանրամասն տեղեկութիւններ փութով կը տրուին փափաքողաց:

ՄԵՄ ՄԹԵՐԱՆՈՅ ԴԵՂՈՐԷԻՑ

Լ. ԱՐՄԱՆՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐԱԷ

Կ. Պոլիս Ֆետրեան խանի տակ քիւ 3

Վաճառատունս պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ ամէն տեսակ թարմ դեղորայք. վիրարութական գործիքներ Անգղիական եւ Գաղղ. պատրաստ դեղեր, զօնեաքներ, գինիներ եւ հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար գներով, Լ. Արսլանեան եւ Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկար ատե-

նէ անձնական փորձառութիւններ ունին ամէն ջանք եւ աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացնելու համար, մասնաւոր ուշադրութիւն կը հըրաւիրեմք գաւառաց համար, որոնց վը շրկենք դեղորայք ամենայն արագութեամբ, թարմ եւ մատչելի գներով:

Չարաճճի մլուկներու եւ լուերու եւն. համար միջատասպան փոշի Poudre insecticide մեծաքանակ բերել տուած ենք ուղղակի Տալմացիաէն, որուն համար մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրեմք յարգոյ հասարակութեան:

ՀԱՒ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ ԽԻՍՏ ԿԱՐԵՒՈՐ

Կ'ուզէք կատարեալ գիրք մը ունենալ, հաւարութեան համար. գնեցէ՛ք Չարդարեան Գրատունէն «Թափուգ Պէտլէմէք» տնուն գիրքը:

Գինը 3 զրուշ



ՀԱՆԿ-ԲԱՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ. ՊՈԼԻՍ

ՄԵՄ Վ.Ա.ՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՐԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ձեղալ պէյ Խանի դրան կից, Թիւ 10

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդարձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կողմերը: Գաւառներու յանձնարարութիւնները փութով և խնամով կը կատարուին:

Զինական, շնդկական, ճովուրդի և Սէյլանի էն ազնիւ թէյերէն ուղղակի բերուած, կը գտնուին հոն:

Զգուշանալ սոյն վաճառանիշին կեղծերէն:

Փնտռել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ Ստորագրութիւնը:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

ENCYCLOPEDIÉ

(مجموعة علوم)

Բ. ՇՐՋԱՆ

1898 ՄԱՐՏ 28

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Տ. ՅՈՎՀ. Ա. ՔԶ. ՀԻՒՆԲԵԱՐՊԵՏԵՆՏԵՆ

Ա.

Դրագէտը՝ ինչպէս ատենով իր գրաւուած միջավայրէն առած է իր զարգացումը, նոյնպէս և ատենին պէտք է իր հմտութեան բաժինն հանէ հասարակաց զարգացման:

Տարակոյս չիկայ որ իր գիտնալ կարծածը հրատարակելու քաջութիւնն ունեցողը իր իսկապէս գիտցածը ծածկողէն աւելի արժանիք ունի: Առաջինն գիտաւորութիւնը գովելի է. երկրորդին զանցառութիւնն է պարսաւելի:

Այո՛, գիտութիւնը կը պարտաւորէ և հեղինակ մը որ գիտակից է իր կարողութեան՝ պէտք է անշուշտ երկասիրէ: Ան որ հասարակութեան կը զլանայ իր հմտութիւնը՝ իր հմտութեան բաժինը կը կողոպտէ հասարակութենէն:

Բայց թուղթ մրոտող մը չի՞ կրնար ինքն իր մէջ երեւակայել հանճար մը որ գոյութիւն չունի, միթէ չի կրնա՞ր խաբել ինքզինքը և առաւելապէս հասարակութիւնը որ իր գրա-

ւելանքը գատելու մասնագէտը չէ: Իհարայր ատեն քննադատին կարգը կ'ընդոյ և անոր մի քիչ դառն բայց անհրաժեշտ պաշտօնը կը սկսի: Այն է որ գրագէտին համբաւեալ գիտութեան չափը կը ճշդէ և կը գնահատէ անոր գրականութեան մատուցած ծառայութիւնը:

Բայց թէ հեղինակ մը՝ իր յաւակնութեանց փճացումը տեսնելով, սրբամտի և քննադատին պաշտօնը ուրանալ փորձէ. ահա բան մը որ իրեն չը ներուիր:

Ի՞նչ, գիտութեան ընկալցքը կա՞նի, իրեն հաճոյք պատճառելու համար, և որպէս զի անհատի մը փառքը չը նսեմանայ, իմբովին դէպ ի սգիտութիւն ետ և՛ տ երթանք:

Քանի որ հեղինակ մը գիրք մը հրատարակելու չափ ինքն իր վրայ վստահութիւն է ունեցեր, դէպ ի լոյս առաջ թող գայ. իր սխալն ալ տեսնենք շիտակն ալ և իր իսկական արժանիքին համեմատ մեր յարգանքը իրեն մատուցանենք:

Բարեբաղդաբար մտուգաբանական Բառարանին հեղինակը անհեթեթ պահանջում մը ըրած չէ, և չենք ալ կարծեր որ իր բարեկամներուն հրահանգ-

հարցուց թէ ի՞նչ էր մարդոց նախա-
լիզուն։ Այս կէտին վրայ երկա՛ր մը-
տածեր էր թագաւորը, առանց սա-
կայն որոշ լուծման մը յանգելու։
Կաճառի անդամներէն իւրաքանչիւրը
զանազան կարծիքներ յայտնեց, իրար-
մէ աւելի կամ պակաս յաջող պա-
տասխաններով, որոնք պէտք եղած
համոզումը չընծայեցին թագաւորին։
Ուստի, այս վերջինը ուղեւորով գործ-
նականապէս պարզել այդ կնճռոտ
խնդիրը և որպէս թէ պիտի կարենայ
համոզիչ արդիւնք մը ձեռք բերել՝
անմիջապէս հրաման կուտայ իր Լալա-
պէյ իշխանին, որպէս զի ամէն ազգէ
արու և էգ կաթնկեր մանուկներ հա-
ւաքէ մասնաւոր տան մը մէջ և անոնց
մայրերը կամ ստնտուները միայն կաթ
տալու համար թոյլատրէ մտնել իրենց
զաւկներուն քով՝ առանց երբեք բառ-
մ'իսկ արտասանելու։ Ու անոնց վրայ
հսկելու պաշտօնը կուտայ իշխանը ներ-
քիններուն՝ որոնք եթէ սենեակէն
լալու ձայն մը լսէին, պարտաւոր էին
իսկոյն լուր տալու լացողին մօրը կամ
ստնտուին։

Այսպէս բաւական ժամանակ անց-
նելէ ետքը, տղաք հետզհետէ սկսան
խօսիլ․ բայց ի՞նչ․ յայտնի չէր, թա-
գաւորը անձամբ դնայ տղոց գտնուած
տեղն անոնց խօսած լեզուն իմանա-
լու համար և զարմացմամբ տեսաւ թէ
ծանօթ լեզուներէն և ոչ մէկուն կը
նմանէր խօսածին։ Խփալուր ու բեկ-
բեկ բարբառներ՝ որոնցմով սակայն
տղաքը կրնային իրարու ըսած հասկը-
նալ և իրարու բան հասկցնել։

Շահ Ապպաս բարկացաւ։

Լալա-պէյ իշխանը համոզելու ջա-
նաց թէ երբ ասոնք իրենց մօրերնուն
յանձնուին, իրենց մայրինի լեզուն
սովորելով՝ ինքնաբերաբար կը մոռնան
այդ բարբառը։

Բայց թէ ինչպէ՞ս լեզուն իր անյօդ-

և թոհուրոհ վիճակէն ելլելով յօդա-
ւոր և կանոնաւոր դիրք մը առաւ,
ահա՛ խնդիր մը եւս։

Մարդն, ինչպէս որ վերն ալ ըսի,
իր կցկտուր և միավանկ բառերով
կազմած լեզուն, պիտի կրնար կատա-
րելագործել միշտ իր նմանը մօտիկ ընե-
լով, որուն բերնէն ալ՝ անշուշտ իրե-
նինէն տարբեր վանկեր կրնար լսել,
և և այսպէս աստիճանաբար, լսածը
ստեղծածին վրայ բարդելով պիտի
ունենար լեզու մը, որ ռակայն ան-
կերպարան էր։

Ոմանք զարմանալի անտարբերու-
թեամբ կը համարձակին ըսել թէ լե-
զուն ի սկզբանէ անտի գոյութիւն ու-
նէր և թէ Ադամ և Եւա դրախտին
մէջ հայերէն կը խօսէին!!! Շատեր
համակարծիք են այս հակաբնական
դադափարին, նոյն իսկ Եւրոպացիներ
պնդած են թէ Նախախնամութիւնը
մարդն ստեղծած ժամանակ անոր ան-
միջական ձիւք մը, ընծայ մը ըրած է
լեզուն․ ինչպէս որ 1766ին Սիւսմիլք
(Süssmilch) Գերմանացին ջանաց ըստ
կարելւոյն մասնաւոր երկասիրու-
թեամբ մը հաստատել թէ՛ լեզուին
ծագման պատճառը մարդը չէ, այլ
անոր Արարիչը։

Ոմանք ալ մարդուն իմացականու-
թեան արդիւնքը կը նկատեն լեզու-
ներու կազմութեան գործը, ինչպէս
Հէրտըր (Herder) Գերման փիլիսոփայ
հնաբան-բանասէրը՝ իր «Լեզուներու
ծագում» անուն համբաւաւոր գոր-
ծին մէջ, որով Սիւսմիլքի կարծիքը
ջրեց բոլորովին։ Նոյնպէս Ատէլունկ
(Adelung) իր «Միհրդատ» անուն աշ-
խատութեան մէջ Հէրտըրի դադափա-
րը կը շօշափէր և կ'ըսէր թէ լեզու-
ներն միօրինակ կազմուած են իրենց
ծագման ատեն և իրարմէ կը տարբե-
րին միայն իրենց զարգացման աստի-
ճանով։

Ուրեմն կրնանք ընդունիլ թէ մարդուն նախնական լեզուն միօրինակ էր և միեւնոյն կերպով կը շարունակուէր զարգանալ՝ երբ դեռ միեւնոյն միջավայրի մէջ կ'ապրէր մարդն. բայց երբ սա ստիպուեցաւ տարբեր տեղեր ուր դնելու այլեւայլ նպատակներով, այն ատեն լեզուն սկսաւ տակաւ առ տակաւ փոփոխութիւններ կրել միավանկային վիճակին մէջ իսկ, և մարդիկ քանի տարածուեցան աշխարհի վրայ, այնքան յեղաշրջումներ կրեց իր լեզուն, (չմոռնանք ըսելու թէ ասոնք բոլոր նախապատմական ժամանակներու մէջ եղած ըլլալ կը թուին) և այս տեւեց մինչեւ հոն՝ ուր այլ եւս կամաց կամաց լեզուն ձեւ առնել սկսաւ:

ԳԱՌՆԻԿ Ա. ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ

ՎԱՐԱԳՈՅՐԻՆ ԵՏԵԻԷՆ

«ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄԱ»

Ինծի «սիրելի բարեկամ» ըսողներուն համրանքը շատ է. բայց իմ ունեցած ճշմարտապէս բարեկամներու քանակը քանի մը հատեն անդին չանցնիր:

«Սիրելի բարեկամ» ըսողներուն մէջ հատ մը ունիմ, որն որ ուր որ ըլլամ, ձեռքս կրակը ըլլայ, գլուխս քերելու ժամանակ չունենամ, անպատճառ զիս պիտի կեցնէ եւ ձեռքս թոթուելով «Օ՛... բարի տեսութիւն, ինչպէ՞ս էք, սիրելի բարեկամ» պիտի ըսէ:

Ես ալ քաղաքավարութեան պահանջածին չափ պէտք եղածը կ'ընեմ. սակայն շատ անգամ այդչափով չեմ ազատիր. նայիս իրեն համար շատ կարեւոր համարուած հարց մը կ'ընէ եւ կ'սկսի երկար բարակ ճառել. պէտք է մտիկ ընել զինքը եւ միջանկեալ հարցումներուն ալ պատասխան գտնել. ալ կրնաք երեւակայել թէ մինչեւ որ օձիքս ազատեմ որչափ սրտնեղութիւն կը կրեմ:

Հատ մըն ալ ունիմ ծայրայեղ քաղաքավար, կամ թէ աւելի ճիշդը ծաղրելի քաղաքավար. վերինէն շատ չի տարբերիր. միայն թէ ձեռքս թոթուելու ատեն այնչափ կը խոնարհի որ վախճամ թէ ձեռքս պագնէ. խօսած ատենը աչքի, բերնի, ունքի եւ դէմքի տեսակաւոր փթթումներ, հայելիի առջեւ (ինչպէս կ'ըսեն) վարժուած թիւն ըլլուած ժպիտներ, կոկորդային, կերկերաձայն եւ քրքրուք երրեակ խնդուքներ, ձեռաց եւ ոտից անհատնում շարժումներ, ուսերու եւ իրանի այնչափ չափազանց կոտորտուքներ կ'ընէ, եւ ստէպ «ներեցէ՛ք սիրելի բարեկամ», «այնպէս չէ՞ սիրելի բարեկամ», «իրաւունք չունի՞մ, սիրելի բարեկամ» կ'ըսէ եւ այնչափ անգամ կը կրկնէ որ ամբողջ ջիւերս ոտքի կ'ելլեն, եւ միտքովս հանդիպման այդ չար ժամը կ'անիծեմ:

Յիշեալ «սիրելի բարեկամ» իս համար թուարանական համեմատութիւն մը ընել կ'արժէ, այնպէս չէ՞: Ուրեմն իմ առջեւ որ այդչափ կը կոտորտուի, հապա՞ Օրիորդի մը — որչափ =:

Հատ մը եւս ունիմ, որն որ զիս հեռուէն տեսածին պէս «բարի» երթայ սիրելի բարեկամ» բարձրաձայն պիտի կանչէ անպատճառ. պարտաւոր եմ անոր հետ ալ հեռուէն օգին մէջ ձեռքի շարժում մը եւ ժպիտ փոխանակել. եւ այս ընելու եմ ամեն անգամուն եթէ օրը հարիւր անգամ ալ հանդիպիմ իրեն:

Հապա այս ամենուն մէջ մէկ հատիկ մը կայ, ծաղիկ մը — հոտոտողին քթին գերանները կը խախտի — որ Աստուած իմ, արդէն երբ միտքս իյնայ գէշ կ'ըլլամ. անանկ բարակ ձայնով մը ողորդէ շեշտով մը «սիրելի բարեկամ» կ'ըսէ որ վրաս մարելիք կուգայ, չեմ դիմանար:

Ո՞ր մէկը թուեմ. «սիրելի բարեկամ» ներուս պէսպիսութիւնովը ամբողջ «էլէ» մը կրնամ լեցնել:

Եւ այս սիրելի «բարեկամ»ներս որո՞նք են աւելի, զիտէք. տեղ մը պատահամբ կամ դիպուածով ճանչցած մարդիկս են, որոնք կ'երեւի թէ մէկու մը հետ ծանօթանալը բարեկամանալ կը հասկնան. եւ

այսպիսիներուն անգամ մը անունդ ճանչցնելդ պէտք է, ա'լ անոնց բերնին ծամոցը կ'ըլլաս, «էպլա» կ'ընեն քեզ. բացակայութեանդ ուրիշի մը առջեւ յաճախ կը կըրկնէ «իմ ամենասիրելի, ամենամոտերիմ բարեկամս Պր... ինչը» եւայլն:

Եւ որովհետեւ ուր որ հանդիպիս ասանկներուն կը կեցնեն քեզ վայրկեաններով, եւ քու միտքդ տարբեր մտածումներով զբաղուած կ'ըլլայ յաճախ, մանաւանդ որ նեղուելով եւ կամքիդ հակառակ զինքը մտիկ ընելու ստիպուած ես, ասոր համար շատ անգամներ կառքի եւ շուգեկառքի տակ մնալու, ծովը ինչպիսի եւ այլ վտանգներու ենթարկած են զիս եւ մազապուր ազատած եմ:

Ո'հ, շատ անտանելի են «սիրելի բարեկամներս»:

Սա պիտի հարցնեմ որ արդեօք կա՞յ մէկը որ չունենայ ասոնցմէ. եթէ կայ կանխաւ շնորհաւորութիւններս իրեն:

«Սիրելի բարեկամներուս անտանելի բարեկամութեանցը հանդէպ ես ա'լ եթէ չիտակը ըսեմ, անտանելի ազնիւ կը գըտնուիմ. արդեօք ասոր համար է որ «սիրելի բարեկամներուս քանակը օրէ օր կ'աւելնայ»:

Ըսել է յանցանքը իմ քով է. ինչ ընեմ, տարբեր չեմ կրնար վարուիլ իրենց հետ. թող ուրիշներ դաս առնեն իմ օրինակէս եւ զգուշանան:

ՔԱՐՈՂ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Ժառանգաթողին ձգած ստացուածքը նոյնութեամբ ժառանգորդաց կը տրուի:

Պ. Մեռնողին (ժառանգաթողին) ստացուածքը նախապատուութեան օրինօք չորս իրաւանց կը յատկանայ:

1. — Պատանքի եւ թաղման ծախքերու:

Սակայն հետագայ չորս պարագայները բացառութիւն կը կազմեն.

Ա. Եթէ մեռնողը իր մահուընէն առաջ պարտքին փոխարէն բան մը գրաւ (ըէհն) տուած ըլլայ, նախ՝ գրաւառուն (միւրթէհին) պահանջը կը վճարուի. եւ մնացածով պատանքի եւ թաղման ծախքերը կը հոգացուի:

Բ. Եթէ մէկը իր կենդանութեանը գընած ասրանքը առանց վայն ստացած եւ արժէքը վճարած ըլլալու մեռնի, այդ ապրանքը թէրէքէի չը կրնար մտնել ցորչափ արժէքը չը վճարուի:

Գ. Եթէ մէկը իր տունը ուրիշի մը վարձու տալէ եւ վարձագինն ալ ստանալէ յետոյ մեռնի, տունը վարձագնոյն փոխարէն իր գրաւ կը նկատուի:

Դ. Եթէ (պէյի ֆասիտ)ի մէջ, այսինքն այնպիսի վաճառումի մը մէջ յորում գնող թէ վաճառող ազատ են վաճառումը եղծանելու, ապրանքը գնողին յանձնուած ըլլայ, եւ գնողին ձեռքը գտնուած ժամանակ եւ վաճառումը եղծուելէ առաջ, ծախողը մեռնի, ապրանքը գնողին ձեռքէն ետ առնուելով ծախողին պատանքին եւ թաղման չը յատկացուի ցորչափ ապրանքին արժէքը գնողին չը վճարուի:

2. Պարտուց վճարման.

Թէրէքէէն՝ պատանքի եւ թաղման ծախքերը հանուելէ յետոյ, մնացածէն մեռնողին պարտքերը կը վճարուին:

Եթէ թէրէքէն իր ամբողջութեամբ պարտուց հատուցման անբաւական ըլլայ, եւ միանգամայն մէկ պահանջատէր գտնուի, թէրէքէն ամբողջովին անոր կը տրուի. իսկ եթէ պահանջատէրերը բազմաթիւ են, պարտքին տեսակին համեմատ կը վարուի:

Մեռնողին պարտքերը երկու տեսակ են.

Ա. Առողջութեանը ըրած պարտքերը որոնք ապացոյցներով եւ կամ առողջութեանը միջոցին յայտարարութեամբ (իզրար) հաստատուած են:

Բ. Հիւանդագին վիճակին մէջ ըրած յայտարարութեամբ հաստատուած պարտքերը:

Այս երկու տեսակ պարտքերը կամ զատ զատ եւ կամ միասին կը գտնուին: Եթէ մեռնողին պարտքերը կամ առաջին կամ

վերջին տեսակէ ըլլան, թէրէքէն, իր ամբողջութեամբ, պահանջատէրերուն միջեւ պահանջներուն համեմատութեամբ կը բաժնուի:

Իսկ եթէ այս երկու տեսակ պարտքերը միանգամայն գտնուելու ըլլան, առաջինները երկրորդներէն նախադաս կը նկատուին. հետեւաբար, նախ՝ թէրէքէն առաջին տեսակ պարտքերը կը վճարուին ու յետոյ եթէ աւելնայ, երկրորդները կը հատուցուին:

3. Կտակի գործադրութեան.

Եթէ մեռնողին պարտքերը վճարուելէ յետոյ, թէրէքէն բան աւելնայ, աւելցածէն, մեռնողին կտակը կը գործադրուի:

Ըստ Շէրիի մէկը իր ստացուածքին մէկ երրորդը միայն կրնայ կտակել օտարին, հետեւաբար իր մահուանէն վերջ, ժառանգորդները ազատ են մէկ երրորդէն աւելին չը ճանչնալու. սակայն ժառանգորդներուն հաճութեամբ մէկ երրորդէն աւելին կրնայ ընդունելի ըլլալ:

Սա կէտը միայն ուշադրութենէն վրիպելու չէ թէ՛ թէրէքէն, նախ պատանքի եւ թաղման ծախքերը կը հանուին եւ պարտքերը կը վճարուին եւ յետոյ մնացածին մէկ երրորդը կտակին կը յատկացուի:

4. Ժառանգորդներուն միջեւ բաշխման:

Ն. ԹՈԳԱԹԼԵԱՆ

ԼԱՕՅԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

(ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԵԱՆՔԷ)

(Վ. Էպիկ)

Լաօ, ձինկայի մէկ հատիկ եւ պաշտելի աղջիկը, իր տան ճրագը, իր թաղին մարգրիտը, իր միջավայրին աստղը, Չինուհիներուն վարդը, կ'ամուսնանայ Մանքունի հետ, որ Չինացի երիտասարդներուն մէջէն գեղեցիկն է, որ հրապուրիչ աչքեր, անուշ լեզու մ'ունի, որով կը դիւրիւնէ, կը հմայէ իր խօսակիցը: Չինացի յաւերժահարսը իր սենեակին մէջ է, գե-

ղաղէմ՝ կիներ իր արդուզարդին հոգ կը տանին. մինչդեռ սպասուհիներ, ճոխ արդուզարդերով, իրենց նորատի տիրուհոյն առջեւ խունկ կը ծխեն:

Ձին, Լաօյի մայրը, անտուկի մը վրայ կռթնած, աղջկանը ճերմակեղէնները եւ ասեղնագործեալ հանդերձները դուրս կը հանէ անկէ, ամեն մէկ կտորը կը համբուրէ, եւ յետոյ զայն կը ներկայացնէ իր փառաշուք հրաւիրեալներուն, որոնք առաջատարի մարմնով աղջիկը կը հագուեցնեն: Մանի, Լաօի քոյրը, զմրուխտով եւ յակինթով ագուցեալ սանտրի մը միջոցաւ հարսին անուշաբոյր երկայն մազերը կը սանտրէ, յետոյ Լաօյի գլխուն վրայ դեղին հանգոյցը կը դնէ՝ այսպէս մրմնջելով. «Իցի՛ւ թէ այս ժապաւէնը թոյլ չի տայ որ դժբաղդութիւն մը պատահի Լաօյի, իցի՛ւ թէ պահէ պաշտպանէ զնա կիներուն նախանձին, այրերուն ցանկուծեանց եւ չար ոգիներու փորձութեանց դէմ:

Նոր հարսը, ապա համբուրեց իր մօր ձեռքը, գրկեց ներկայ գտնուողները, եւ ամեն ոք իջաւ ընդունելութեան դահլիճ:

Շքեղ գորգեր, որոնց վրայ գոյնզգոյն նկարուած են, խօլ երեւակայութեան մը ծնունդը եղող պատկերներ, երազներ՝ հոգիի մը, որ կ'ապրի հանդերձալին մէջ, վեհաշուք կերպով կը զարգարէին այս սրահը: Պատերուն տակը սնդուսէ բազմոցներ ի հանգիստ կը յանկուցանէին հրաւիրեալները: Հոս ու հոն, հրաշալի ասեղնագործութիւններով զարդարուած մի քանի բարձեր, կարծես կ'սպասէին յոգնած գլխու մը որ գար իրենց վրայ հանգիստ առնէր:

Լաօ, վերջապէս եկաւ բազմոցի մը վըրայ փռուեցաւ, իր քնքուշ մարմինը հանգչեցուց անոր վրայ, մինչդեռ Հինկոնկ իր մտերիմը, վարդեր եւ շուշաններ կը ցանցնէր կոյսին մազերուն վրայ:

Երգչուհիներ, Չինական երգերու մէջ կը պատմեն Լաօյի գեղեցկութիւնը եւ շնորհալի ձիւքերը, Լաօյի, ձինկայի մէկ հատիկ աղջկան, որ իր տանը ճրագն է, իր թաղին մարգրիտը, իր միջավայրին

աստղը եւ Չինուհիներուն վարդը: Նէմ-
չինկ, փեսին մայրը, Լաօյի քով նստած,
իր սիրեցեալ գերազնիւ որդւոյն վրայ կը
խօսի, անոր յատկութիւնները կը թուէ:

— Գեղեցիկ չէ՞, սիրուն չէ՞, ազնիւ եւ
դիւթիչ չէ՞ կը հարցնէ Նէմչինկ, կ'աղա-
չէ իւր փափկասուն հարսին որ երջանիկ
ընէ իր որդին՝ Մանքունը:

Լաօ, յոնքերը պնտած, ակնարկը
տարտամ, հրամայական ժպիտ մը չրթան-
ցը վրայ, Մանքունի նկատմամբ արտա-
սանուած ներդողները կը լսէ, եւ սիրտը
տարօրինակ նախազգացումով մը սեղ-
մուելով, կը հառաչէ... «ինչո՞ւ համար,
ինչպէ՞ս»:

Պաշտելի կոյսը կը խորհի թէ ինչպէ՞ս
պիտի կրնայ տալ իր սիրտը, իր հոգին,
իր մարմինը. մարդու մը, զոր երբեք չէր
տեսած, զոր չի ճանչնար եւ զոր, թերեւս
չի պիտի սիրէ...:

Յանկարծ, սրահին դուռը կը բացուի
մեծ չառաչմամբ, Մանքուն, որուն ան-
համբեր կ'սպասուէր եւ որմէ կը տարա-
կուէր Լաօ թէ արդեօք պիտի կրնար
սիրել, ներս կը մտնէ կը յառաջանայ դէպ
ի Լաօ, կը ծնրադրէ անոր առջեւ, եւ իր
պզտիկ մուճակներուն ծայրը յարգանք
կը համբուրէ ըսելով, «Հոգիս թող ցնծայ
առ յաւիտ գրեզ վայելելով: Սակայն Լաօ
երեսը անդին կը դարձնէ, սիրտը կը
սեղմուի, աչքերը արցունքով կը վարա-
դուրին: Մանքուն, որ հրապուրիչ աչ-
քեր, քաղցրախօս լեզու մ'ունի, որ կը դիւ-
թէ, կը հմայէ դիմացինը, իրեն տգեղ կը
թուի, խիստ տգեղ, ակնարկը կը սառե-
ցնէ զինքը, ճայնը իրեն տաղտուկ կը
պատճառէ, եւ յուսահատ Լաօ ինքնիրեն
կը հարցնէ թէ ինչպէ՞ս կարելի պիտի ըլ-
լայ իր սիրտն, իր հոգին, իր մարմինը,
տալ այնպիսի մէկու մը զոր կ'զգայ թէ
կ'ատէ...:

Քանի մը վայրկեան ետքը Մանքուն
հարս ու փեսին յատկացեալ սրահը կը
քաշուի, ան տտեն Նէմչինկ Լաօյի կը մօ-
տենայ եւ մարդարտազարդ հոյակապ ոս-
կի զօտի մը կը մատուցանէ: Յանկարծա-
կան տոգունութիւն մը կոյսին այտերը

կը պատէ, ճակատը կը մթազնի, զոհո-
ղութեան ժամը հնչած է...: Լաօ կ'զգայ
թէ ուժաթափ կ'ըլլայ... սակայն ոտքի
կ'ելլէ, եւ քայլ առ քայլ իր կեսրոջը կը
հետեւի: Չինացի յաւերժահարսին ամեն
մէկ քայլափոխին, վարդեր եւ շուշանե-
րը, որոնցմով զինքը զարդարեր էին, գոր-
զին վրայ կ'իյնան, կարծես պարիկներու
արցունքներ իջած ըլլային, որոնք կաթիլ
կաթիլ կ'իյնային այն երջանիկ անցեալին
վրայ, ուրկէ կոյսը կը բաժնուէր: Երբ կը
հասնին հարս ու փեսին սենեակը, Նէմ-
չինկ, դուռը կը զարնէ, փեսան կը բա-
նայ, եւ ծնկան վրայ կուգայ Լաօյի առ-
ջեւ: Լաօ յայնժամ Մանքունի կը մա-
տուցանէ զօտին զոր նա կը համբուրէ
հինգ անգամ: Նէմչինկ կը հեռանայ եւ
նորապսակ ամուսնեքը առանձին կը թողու:
Պահիկ մը ետքը, Մանքուն ոտքի կ'ելլէ,
իրեն համար ստեղծուած արարածը իր
զրկաց մէջ կ'առնէ ու վարդերով զար-
դարուած փղոսկրեայ թիկնաթոռի մը վը-
րայ կը նստեցնէ: Չինացի երիտասարդը
ուրախութենէն կը խելայեղի: Այս ամենը
արդեօք իրողութիւն էր, արդեօք երազի
մը խաղալիկը չ'էր: Այս պաշտեցեալ կոյ-
սը արդեօք իրը պիտի ըլլար: Թարմու-
թեամբ եւ գեղեցկութեամբ լի այս պաշ-
տեցեալ արարածը միայն իր համայնքնե-
րուն եւ գեղեցկութեան կ'սպալէր, որ-
պէս զի սիրային զգացումները թրթռա-
յին: Անդին, երգչուհիներ կ'երգեն, միշտ
կ'երգեն Ծայրագոյն Արեւելքի այն մոգա-
կան երգերը, որոնց մէջ շողշողուն խօս-
քերով, կը պատմեն Լաօյի շնորհալի խօս-
քերը, ձինկայի մէկ հատիկ աղջկան, բազ-
մակողմանի գեղեցկութիւնները: Երաժշ-
տական եղանակները կը խեղդուին երկա-
րածիզ հառաչանքներու մէջ, քաղցր ներ-
դաշնակութիւններ կը հնչեցնեն, իրենց
տխուր այլ սրտագրաւ մեղեդիները...:
Մինչդեռ Չինացի յաւերժահարսը հոգին
տիրամած եւ սիրտը տհաճութեամբ թունդ
եղած, մեքենապէս կը վայելէ գեղեցկները
այն մարդուն զոր չի սիրեր եւ երբեք սի-
րելիք ալ չունի:

Լաօ ինքնիրմէ ելած, Մանքունի բազ-

կացը մէջէն ուժգին կերպով ինքզինքը կ'ազատէ, եւ իր սենեակը կը քաշուի: Մեքենապէտ պատշգամին վրայ կ'ելլէ, հեծկլտուքներ կը խեղդեն իւր կոկորդը, Չինուհին մարմինը կ'ստովին վար կը կախուի խորունկ անհուն վշտի մը ծանրութեան տակ...:

Բայց յանկարծ Լաօ կը շտկուի, իր ճակատին նախկին փայլը կը վերադառնայ, աչքերը տարօրինակ կերպով կը բոցավառին... ամպ մը կ'անցնի իր դէմքին վրայէն: Անմիջապէս վերջացող օրուան լուսութեան մէջ, եզակի անհուն մը կը լսուի... մարմինի մը անկումն էր այն, Լաօ, նոր հարսը, իւր կուսութիւնը, Մանքունիի դեռ չի գոհած, Լաօ, իր տան ճրագը, իր թաղին մարդրիտը, իր միջավայրին աստղը, Չինացի աղջկանց վարդը, Օակկօ գետին մէջ, փնտռած էր այն հանգիստն ու երջանկութիւնը զոր չէր գտած գետէն դուրս:

Այս պահուս երկինքներու թագուհին ամպէ մը դուրս ելաւ ժպտելով կոյսին՝ այնքան մաքուր, այնքան գեղանի եւ ուրուն անարժան էր երկիրը:

Թարգմ. Վ. Գ. ԹՈՎՍՏԱՆՍ

ԱՆՔՈՒՆՈՒԹԻՒՆ

«Քունս չի տանիր». ո՛րչափ յաճախ կը լսենք այս տրտունջը, առանց սակայն խորհելու թէ որչափ ցաւ, անձկութիւն ու յուսահատութիւն կայ այդ տրտունջին մէջ: Այն հարուստները, որոնց համար դիւրագոյն է վայելել երկրային ամէն վայելք. անոնք իսկ իրենց չքեղապերճ ննջասենեակներուն մէջ, հանգստաւէտ օթոցներուն վրայ կը զգան անքունութեան նեղութիւնը այնչափ՝ որչափ կրնայ զգալ աղքատը իւր կարծր խշտեակին վրայ, նոյնպէս փափկաճաշակ տիրուհին իւր կահուղ մահճակալին մէջ՝ որչափ իր աղախինը իւր խուցին մէջ: Եւ այս անձինք ինչո՞ւ համար չեն կրնար քնանալ:

Անքունութեան պատճառները երկու կարգի կը բաժնուին: Առաջին կարգի պատճառներն են սուր հիւանդութիւնները,

կակծաւոր ցաւերն ու վիշտերը. յոյզերը եւ հոգերը: Իսկ երկրորդ կարգի պատճառները որոնցմով կ'սեղենք զբաղիլ հոս, առողջ կամ լաւ եւս առողջ երեւցող անձանց անքունութիւն պատճառող վիճակներուն կը վերաբերին: Սակայն այդ առողջ երեւցող անձանց վաղանցուկ կամ տեւական անքունութեան պատճառները քննելէ առաջ, այսինքն ամբողջ օրն իւր գործովն աշխատելէ ետքը գիշերն ալ քունը չտանող անձանց վիճակը քննելէ առաջ, քունի մէջ մարդուս գործարանային կազմուածքին վիճակին վրայ մէկ քանի դիտողութիւններ ընել պարտինք:

Հին ժամանակի բժիշկներն ու բնախօսները կը կարծէին թէ մարդս այն ատեն կը զգայ հանգստեան եւ քնոյ պէտքը, երբ երեկոյին կամ երկարատեւ արթնութիւնէ մը ետքը, արիւնը ուղեղին մէջ կը շատնայ եւ կը թմրեցնէ զայն եւ հետեւապէս մարդուս քունը կուգայ: Այդ հինները կը կարծէին թէ մարդուս քնացած ատենը ուղեղը միշտ լեցուն է արիւնով ու արթննալու ատեն արիւնը կը պարպուի եւ արթնութեան ատեն չարունակ անարին կը մնայ:

Բայց վերջին ժամանակաց մէջ տեղի ունեցած ախտաբանական քննութիւններով հաստատուեցաւ թէ անասնոց քնոյ ատեն, ուղեղը, հակառակ հիներուն կարծեաց, արիւն չի պարունակեր. եւ այս՝ մարդուս վրայ ալ նոյնը ըլլալով, կարելի եղաւ հետեւեցունել թէ այն ատեն որ ուղեղը եւ իր բջիջները արիւնով կը լեցուին, անքունութիւն յառաջ կուգայ:

Այս հետեւութեան ուղղութիւնը կը հաստատուի հանապազօրեայ փորձառութեամբ: Յայտնի է թէ պատանիք եւ երիտասարդք այնչափ ենթակայ չեն անքունութեան, որչափ՝ չափահասք. եւ ասոնք ալ ո՛չ այնչափ՝ որչափ են ծերերը. եւ այդ վիճակին ալ պատճառը արեան անօթներուն կարծրութիւնն է, որոնք կորոնցուցած ըլլալով իրենց առաձգականութիւնը, չեն կրնար կանոնաւոր պահել արեան շրջանը, որ, հետեւապէս՝ կը յամրանայ: Դիւսաւորապէս սիրտը, որ իւր եւ

րակային կազմաձևովը մեծ դեր կը կատարէ արեան շրջանին մէջ, չունենար իւր նախկին ոյժը ու ճշգրտութիւնը, եւ հետեւապէս պակասաւոր կ'ըլլան արեան բաղախումները: Նոյնպէս ուղեղին արեան անթները անկարող ըլլալով արագ աշխատութեան, ուղեղը, չափ դժուարութեամբ եւ յամրութեամբ կը պարպուի իւր մէջ գտնուած արիւնէն:

Որչափ արիւնարատ ըլլայ ուղեղը, այնչափ դժուար է հասնիլ արեան պակասութեան այն աստիճանին որ պէտք է քուն բերելու համար: Յայտնի է թէ գործարանի մը, ինչպէս նաեւ ուղեղին, գործունէութիւնը իւր մէջ գտնուած արեան առատ կամ նուազ ըլլալուն համեմատութեամբ է. այսպէս նաեւ ստամոքսը, մարսողութեան գործին ատեն այնչափ արիւնարատ է որչափ չէ իւր անաշխատ վիճակին մէջ, նոյնպէս մտաւորական աշխատութեան ատեն, եւ վախու, վշտի, անձկութեան, խնդի եւ յուսոյ պէս հոգեկան պէս պէս յուզմանց ատեն ուղեղը աւելի արիւնարատ է քան որչափ չէ՝ երբ մարմինը եւ հոգին անդորր ըլլան: Ձէք տեսնե՞ր. ինչո՞ւ չի կրնար քնանալ ապազային մտատանջութեամբն վշտացող հայրը, եւ կամ նա որ յաջորդ օրուան համար խնդալից կամ վշտալից դէպքեր կ'ակնկալէ:

Ուղեղին արիւնաշատութիւնը վերոյիշեալ պատճառներէն զատ, կարելի է նաեւ արուեստական միջոցներով ձեռք բերել. եւ ասիկա ալ կ'ըլլայ զանազան թոյներով, որք փորձուած են անասնոց վրայ. ատոնցմէ չատերը արդէն մենք ամէն օր կը գործածենք. վասն զի քաղաքակրթեալ մարդուն համար անհրաժեշտ պէտքի մը կարգն անցած են, ինչպէս ողելից ըմպելիքները, թէյը, խահուէն, ծխախոտը եւայլն, եւայլն: Բայց պարտինք ըսել թէ այս թոյներուն գործածութեան մէջ ալ մարդու անհատական տրամադրութիւնը, տարիքը, այդ թոյնին չափը եւ գըլխաւորապէս վարժութիւնը մեծ դեր կը կատարէ: Սա անժխտելի է թէ ընդհանրապէս ասոնք զանկին ներքնոյն ջերմութիւն

կը պատճառեն, ուղեղին մէջ արիւնը կ'առատացնեն եւ հետեւապէս անքունութիւն յառաջ կը բերեն: Միւս կողմանէ, կան ուրիշ թոյներ ալ որոնց ներգործիչ ազդեցութիւնը ընդհակառակն է. ատոնցմէ նուազ քանակութեամբ եթէ տրուին անասնոց պիտի տեսնենք որ անմիջապէս պիտի պարպուի անոնց ուղեղին արիւնը, եւ ուղեղը պիտի դնէ այն վիճակին մէջ, ինչպէս որ է բնական քնոյ ատեն: Հետեւապէս, այդ թոյները արուեստական քուն յառաջ կը բերեն: Այս պատճառաւ բժիշկները յամառ անքունութեանց ատեն այդ թոյները, փորձուած չափերով, գործածել կը պատուիրեն, գիշերային հանգիստի պակասութիւնէն տկարացող մարմնոյն հանգիստ եւ կաղդուրում տալու համար, հիւանդը մէկ քանի ժամ իւր ցաւերէն ազատելու համար, յուզեալը հանգարտեցնելու, ծերին ոյժը պահելու. եւ որ քունէն ալ գերազանց է, միտարարութիւն տալու համար:

Բայց նորագոյն քննութիւններ բարեփոխելով այս թէօրին, հաստատած են թէ ոչ միայն ուղեղին մէջ գտնուած արեան նուազութիւնը, այլ մկանանց գործունէութիւնն ալ պէտք է որ արիւնը դնէ այնպիսի վիճակի մը մէջ որ այդ ալ ուղեղին եւ ջիղերուն յոգնութեան եւ հանգստանալու պէտքին զգացումը տայ: Եւ ամենօրեայ փորձառութիւնն ալ կը հաստատէ զայս: Մենք աւելի լաւ եւ կաղդուրիչ քուն մը կ'ունենանք երբ մարմնական շարժումներով հոգնին մեր ջիղերը. բան մը որ նստողական կեանքով չենք կրնար ունենալ: Իւր գրասեղանին վրայ շարունակ մտաւոր աշխատութեամբ զբաղողը չափ պատճառներ ունի նախանձելու այն փայտահատին վրայ որ աշխատանքին աշխոյժ շարժումներէն ետքը իւր գիշերային հանգիստը կը փնտռէ խորունկ ու խաղաղ քունով մը յաջորդ օրուան ոյժը պատրաստելու համար:

Մտաւորական եւ մարմնական աշխատութեանց մէջ բանաւոր բաժանում, բացօթեայ վայրերու մէջ մարմնական չափաւոր մարզանք եւ վարժարանի մէջ ալ մտաւոր

աշխատութեանց չափազանցութենէ եւ անյարմար ընթերցմանց պատճառաւ յառաջ եկած յուզումներէ զգուշութեան ապահով երաշխաւորութիւններ են երիտասարդաց զարգացման համար, որք չատպէտք ունին խաղաղ քունի: Բայց նա որ միակողմանի խնամքով, լոկ միտքը զարգացնելու ետեւէ կ'իյնայ եւ մարմնոյն զօրացումը կ'անտեսէ, եւ բարգաւաճման մէջ գտնուող ուղեղը չափազանց խճողելով շարունակական գործունէութեան մէջ կը դնէ զայն, եւ հետեւապէս միշտ արիւնաւորաւ, սյնալիսին եթէ ծանր հիւանդութեան չ'ենթարկուի իսկ, չի կրնար սակայն զերծ մնալ ջղադրագոյնութենէ, որ դարձու մէկ նոր հիւանդութիւնն է եւ իւր հետ կը բերէ միշտ անորոշութիւն եւ անձնավստահութեան պակասութիւն: Այն յոստալից երիտասարդը, որ տաղանդաւոր էր, եւ իւր յիշողութիւնն ու իմացական կարողութիւնը իւր ծնողաց խնդրէ եւ դաստիարակացը սքանչացում կը պատճառէին, իրական կեանքի ծփանքին մէջ մտած ատեն չպիտի կրնայ կեանքի պայքարին դէմ դնել, պիտի փճանայ իւր կորովն ու ինքնավստահութիւնը եւ կեանքի ալիքներէն պիտի քշուի անստուգութեան, անճարձկութեան: Ուստի պատանեկութեան տարիքէն սկսեալ պէտք է միտքն ու մարմինը հաւասարապէս զարգացնել եւ խնամել, պէտք չէ ծանրաբեռնել միտքը ի վնաս մարմնոյն. եւ հոգ տանելու է որ օրուան յոգնութիւնը մարմնոյն հանդիստ եւ կազդուրում տայ գիշերային խաղաղ քունով: Արդարեւ, ինչպէս որ գրեցինք ի վերեւ, կան արուեստական միջոցներ որ կրնան քնացունել զմեզ եւ մոռցնել առժամապէս ամէն հոգ եւ վիշտ, բայց ատոնք ամենեւին սովորութիւն ընելու չէ եւ կամ ստէպ դործածելու չէ. վասն զի գործարանաւորութիւնը վարժուելով ատոնց, իրապէս պէտք ունեցած ատեննիս ազդեցութիւն չեն ըներ մեր վերայ: Մինչեւ իսկ եթէ անպատճառ պէտք ունենանք ատոնց իրրեւ ամենավերջին դեղ ու միջոց դործածելու զայնս, այսինքն այն ատեն միայն երբ մեր մարմնոյն աշխա-

տութիւնները մտքի աշխատութեանց հետ հաւասարաչափ պահելով, մարմնամարդ ընելով, մաքուր ու առատ օդ շնչելով իսկ անկարելի ըլլայ մեզ ունենալ գիշերային բնական քուն, որ միակ կազդուրիչն է մեր մարմնական եւ հոգեկան կարողութեանց: Երբեք մոռնալու չէ թէ խաղաղ քունը բնութեան մէկ թանկագին նուէրն է մեզ:

Թարգմ. Ի Գեորգ.

Ն. ՊԵՐՃ

ՊԱՐՏԻՉՊԱՆԱԿԱՆ

○○○○○

Գառնասունկ (շոշոռ- ճանշար) կամ խաւիղի
ակարիգ (Campignon de conche)
եւ իր մշակոթիւնը



Բոլոր ճանչցուած տունիկերուն մէջ, ամենէն աւելի անկեղծանային գոյեղներ պարունակողը ճանշարն են: Հակառակ իրենց վերագրուած հոգակին սակայն, կարծուածին չափ արսաստվոր կերպով սննդաւոր չ'են. բայց դժուարամարս են, ջիւերու վրայ ազդուապէս կը ներգործեն եւ աղետալի հետեւանքներու ալ տեղի կուտան, երբ չափազանցօրէն ուտուի: Օրինակներ դժբաղդաւոր անպակաս են, մինչեւ իսկ հին դարու պատմութեան է-

ջերը եթէ թղթատենք, պիտի տեսնենք թիպէսի և Գլուտի պէս թագաւորներ անգամ, որոնք սունկէ թունաւորուելով մեռած են: Բայց իր այս վտանգաւոր յատկութիւններուն հետ, ըսենք նաեւ թէ, սունկը շատ համեղ սնունդ մ'է, և այս պատճառով արեւմտեան խոհանոցներու ամեն առաջնակարգ կերակուրներու մէջ մուտ կը գտնէ իրը համեմ, և անոնց կուտայ ակտիֆիկ համ: Խաւիղներու (խաւիղ) մէջ մշակուած ակարիգը թէեւ թունաւոր չէ, բայց միշտ պէտք է գործածել զայն զգուշութեամբ: մասնաւորապէս ըլլալու է, միտը պինդ, բունը (կոֆ, սոֆ) կարճ, գլուխը ժողոված, վրան ճերմակ, եւ տակի կողմը, որ շատ մը ծալքեր ունի, բաց վարդագոյն: Եթէ ոմանց թերթիկներուն մէջ լիւծ գտնուի, առանց մտածելու նետեցէք զայն: Կուղէի թէեւ միւս տեսակ ուտելի սունկերու վրայ ալ ծանօթութիւններ տալ, բայց այս անգամ մեր նպատակը միայն գառնասունկի մշակութիւնը ըլլալուն, զանց պիտի առնենք:

Մշակեալ գառնասունկը, նոյն ինքն դաշտի ակարիգն է (ֆալգա մանթալ), որ յարմարագոյն պարագաներու մէջ, ինքնիւրէն կը բուսնի: Երկար տարիներէ ի վեր ֆրանսիայի մէջ ակարիգի սերմը կը պատրաստեն մասնաւոր եղանակներով, թունաւորման առաջըր առնելու համար: և այն ալ մասնագէտներու ձեռքով: Խաւիղէս տեսանելի սերմ մը չ'ունի ան: սունկը ամբողջ կը չորցնեն, կը փշիւցընեն, և այդ փշիւրին մէջ է կը գտնուի սոսիլ սպիտակոց (blanc de champignon) կոչուած նիւթը, որ բուսաբանները կ'անուանեն սնկասեր (mycelium): յետոյ զայն աղիուտի խառնելով, կը շաղուեն լաւ մը, պղքսիմաթի ձեւով կը չորցնեն, և կը պահեն տուրիերու մէջ: որ մէկ քանի տարի չոր տեղ մը կենալով, և իր բուսականութիւնը արգիւլելէ յետոյ, կրկին կը վերակենդանանայ նպատաւոր տոմկութեան (նէլէ) մը և յարմար տաքութեան մէջ, և ծնունդ կ'ուտայ այն ատեն նոր սունկերու:

Մշակութիւն: — Խաւիղի ակարիգը կարելի է դիւրութեամբ ամեն տեղ և ամեն ատեն մշակել, քանի մը պղտիկ խնամներով: Այս պարագային մէջ լաւ արդիւնք մը ձեռք բերելու համար, գլխաւոր պայմաններէն մին է մասնաւորապէս արուեստական հող մը պատրաստելը: որ պէտք է արտասովոր արգասաբերութիւն մ'ունենայ, գրեթէ հաստատուն բարեխառնութեան (օդի տաքութեան աստիճան) մը ազդեցութեան տակ: Ահաւասիկ ճիշտ ասոր համար Եւրոպացիք կը նախընտրեն նկուղներ (մալէն) ակարիգի մշակութեան համար, ուր վեր ի վերոյ կրնան հաստատուն բարեխառնութիւն մը գտնալ: Բայց նկուղներէ զատ, ուրիշ յարմար տեղեր ալ կարելի է ընտրել անոր մշակութեան համար: կը բաւէ որ՝ որոշուած տեղը բնականապէս կամ արուեստականօրէն պատսպարուած ըլլայ, և իր բարեխառնութիւնը 30 հարիւրամասնեայէն աւելի չի բարձրանայ, և 40նէն ալ վար չ'իջնայ:

Տեղը որոշուէն վերջը, առաջին գործերնիդ պէտք է ըլլայ խաւիղի պատրաստութեամբ զբաղիլ, որուն գլխաւոր տարրը ԱՂԲՆ է: և այս աղբը պէտք է ըլլայ մասնաւորապէս ճիւղ, որ մէջը երբէք յարգ կամ ուրիշ նիւթեր չի պարունակէ, — թէեւ ոմանք նախամեծար կը սեպեն էջու աղբը —: Այն կենդանիներուն աղբը որ պիտի առնէք, կերակրուած ըլլան չոր սնունդներով: Կանանչեղէնով ապրող կենդանիներուն աղբը աննպաստ է այս մշակութեան, և մինչեւ իսկ կասկածելի՝ անհետ սունկեր հասցնելու մասին: Երբ ձեր արամադրութեան տակ ունենաք այս տեսակ ընտրուած աղբ, կրնաք այն տեսակ ձեռնարկել խաւիղի պատրաստութեան: բայց որովհետեւ նոր աղբը, մէկէն ի մէկ սաստիկ տաքութիւն մը յառաջ կը բերէ ինքն իր մէջ խմորելով, անոր համար պէտք է հետեւեալ պատրաստութեան եղանակներէն մէկուն ենթարկել զայն:

1. Կրնաք աղբին հետ խառնել իւր քան ռորդին չափ պարտէզի աղէկ հող, որո-


մէջ օտար նիւթեր (բանջարեղինաց արմատ, յարգ, ճիւղ, քար, եւ այլն) չի գրանուին, և ինք ալ կախուղ ըլլայ: Այս պարագային՝ կրնաք իսկոյն ձեր աղբահոյտը (խաւիղ ըսել կուզեմ) շտկել, աղբը և հողը խնամով իրար խառնելէ վերջ որովհետեւ՝ խմորումը յամրաբար յառաջ երթալով, չափաւորապէս մեղմ տաքութիւն մը կուտայ. միայն թէ՛ խաւիղին տեղը աւելի չոր ըլլալու է, քան խոնաւ: Երբ աղբահոյտը կազմուի, վերջացնելու համար չորս կողմը սանտրելու է. այսինքն՝ դուրս ցցուած յարդի մանրութները ժողվել, և երեսները ողորկել:

2. Եթէ կուզէք միմիայն աղբ գործածել ձեր խաւիղին համար, այն տունն պէտք է թողուլ զայն, որ տաքութիւնը ինքնին մարի: Այս պարագային ալ հետեւեալ կերպով պէտք է ընել: Բայց նախ չի մոռնանք ըսելու թէ, ակարիգի խաւիղ մը պատրաստելու համար 10—15 միւլ բեռ աղբ պէտք է: Աղբը արտուէն առնելուդ պէս, խիստ խաւիղը պատրաստուելիք տեղը կրեցէք. հոն 1 մետր բարձրութեամբ շեղջակոյտ (եղւն) մը շինեցէք քառանկիւնի ձեւով և խաւ տա խաւ (խալ խալ), և ամեն անգամ ուշադրութեամբ զատեցէք օտար նիւթերը, աղբը խղէկ խառնեցէք իրարու, որ ամեն կողմը հաւասար ըլլայ: Թեթեւապէս թըրջեցէք աղբին այն մասերը, որ չոր կ'երեւան. բոլորտիքը ողորկեցէք և շտկեցէք, յետոյ լաւ մը թնթեցէք մինչեւ որ խաւիղին բարձրութիւնը 0.80 հ. մետրի իջնայ: Այս վիճակին մէջ թողէք մինչեւ որ խմորումէն յառաջ եկած տաքութիւնը չափազանց երեւի. ինչ որ կարելի է ճանչնալ, ամենէն աւելի տաքացած տեղերուն ձերմկնալէն. որ շեղջակոյտը շինուելէն 6—10 օրուան մէջ տեղի կ'ունենայ: Այն տունն փլցուցէք աղբահոյտը, և աղէկ մը իրար խառնելէ վերջը, վերը յիշուած բոլոր նախադրութիւններով նորէն շինեցէք շեղջակոյտը: Առաջին շեղջակոյտը, եթէ դուրսը բաց օդին պատրաստէք աւելի աղէկ կ'ըլլայ, որ քակելնդ յետոյ՝ վերջնականապէս որոշուած տեղը


կը կրէք զայն: Ընդհանրապէս շեղջակոյտը երկրորդ անգամ շինուելէն մէկ քանի օր վերջը, կրկին կ'սկսի ուժով խմորիլ, և չափազանց տաքութիւն յառաջ բերել, որ ամեն պիտի պարտաւորիք անգամ մ'եւս փլցնել, եւ յետոյ երրորդ անգամ մ'ալ վերաշինել: Երբեմն՝ երկրորդ գործողութենէն վերջը, աղբահոյտը պէտք եղածին չափ այրած կ'ըլլայ, և հետեւաբար յարմար՝ սնկասերը տեղաւորելու: Գիտնալու համար թէ, աղբը 'ի վիճակի է, և առանց վտանգի կարելի է գործածել. իր գոյնը լաւ դիտեցէք, որ պէտք է թխաթոյր (էֆեր) ըլլայ, և մէջի յարդի փոստուքն ալ այրելով անյայտացած ըլլան. կազմութեամբ առածիք (շը փափաճի ֆէ պէս), չօչափմամբ իւղային, և որ այլ եւս՝ թարմ աղբի հոտը չի կրէր: Եթէ միեւնոյն անգամուն բաւական ստուար քանակութեամբ աղբ պատրաստէք ձեր շեղջակոյտին համար, դիւրութեամբ կրնաք ձեռք բերել այս յաջողութիւնը, որ պէտք է ըլլայ վեր 'ի վերոյ 1 խորանարդ մետր, և կամ ինչպէս վերը ըսինք, 10—15 միւլ լեցունկիկ բեռ աղբ: Իսկ եթէ փոքր քանակութեամբ պիտի պատրաստէք ձեր աղբահոյտը, շատ դժուարութեամբ կրնաք յաջողիլ, և երբեմն ալ երբէք. որովհետեւ՝ խմորումը անկատար ըլլալուն, աղբը կատարեւապէս աղփուտի չի վերածուիր: Ուստի՝ եթէ փոքր քանակութեամբ ակարիգ հասցնելու համար խաւիղ մը պատրաստել կ'ուզէք, միշտ ստուար քանակութեամբ պատրաստեցէք ձեր աղբը, առէք անկէ ձեզի պէտք եղածին չափ, շինեցէք անով ձեր խաւիղը, և մնացորդը գործածեցէք ձեր պարտէզին մէջ, որ շատ մշակութիւններու օգտակարապէս կը ծառայէ:

Խաւիղներուն ուզած ձեւերնիդ և տարածութիւննիդ կրնաք տալ. բայց փորձով հաստատուած է որ, տեղը և աղբը օգտակարապէս գործածած ըլլալու համար, անոնց բարձրութիւնը 0.50⁵—0.60⁵ ըլլալու է, յատակի միեւնոյն լայնութիւնով. իսկ երկայնութիւնը որչափ որ ուզէք: Այսպէսով վտահ կ'ըլլաք թէ, աղ-

փուտին խմորումէն յանկարծական արտասովոր տաքութիւն մը յառաջ չի գար, որ բերքերնիդ կրնայ վտանգել հսկառակ պարագային: Նրբ բաւական ընդարձակ տեղի մը վրայ պիտի շինէք ձեր խաւիղը, պէտք է համետի (սեֆը) մը պէս երկկողմնաշեղ ընէք զայն, կամ ինչպէս կ'ըսեն, շէկեանէ լաբըրի ձեւով. որուն ուղածնուդ չափ երկայնութիւն կուտաք, վերը յիշուած բարձրութեան և լայնութեան չափերը պահելով: Իսկ երբ պատի մը ե-



ղերքը պիտի շինէք ձեր խաւիղը, որ միմիայն շեղակի մէկ երես մը պիտի կրնայ ունենալ. այն ատեն յատակի լայնութիւնը բարձրութենէն քիչ պէտք է ըլլայ: Կրնաք նաեւ ձեր խաւիղները պատաստել հին տաշտերու (թէֆէ, ֆաթէլ) կամ մէջտեղէն երկուքի բաժնուած տակաւիկներու մէջ. և կամ պարզապէս տափտայտակներու (հին կամ անգործածելի դռներու շուրջ) վրայ. այն ատեն՝ խաւիղները կոնստիւէ (սեֆ-լոյ) կամ գմբէթածեւ (քոպպէ) կ'ընէք. կամ եթէ



ուղէք, խճուղիներու (շօսէ ճամբայ) եղերքները պահեստի դուռած, մանրածոյ քարակոյտերու ձեւով: Այս կերպով, երբ չէք ուղեր տունէն ներս ձեր նկուղին մէջ, կամ հոն՝ ուր պիտի հասցնէք ձեր ակարիգները, աղբի աղտոտութիւնը և

գարշահոտութիւնը տարածել. աղբը առաջուց դուրսը տեղ մը կը պատրաստէք, վերայիշեալ ձեւերով փոքր խաւիղները կը շինէք, և դիւրութեամբ ներս կ'առնէք:

Խաւիղները այս եղանակով պատրաստելնէդ վերջը, պէտք է տակաւին քանի մ'օր եւս սպասել, վստահ ըլլալու համար թէ՛ այլ եւս խմորումը չափազանցօրէն չի կատարուիր: Սովորաբար կարելի է մօտաւորապէս ճանչնալ տաքութեան աստիճանը, միմիայն ձեռքով շեղձակոյկոյտին դպելով, որ անշուշտ վարժ ձեռքի մը գործ է. բայց աւելի վստահ ըլլալու համար, պէտք է հ. մասնեայ ջերմաչափ մը գործածել. որով՝ երբ կը տեսնէք թէ, խաւիղին տաքութիւնը տակաւին 30 աստիճանէն վեր է, — անշուշտ ջերմաչափին ծայրը աղտոտին մէջ պիտի մխէք հասկնալու համար — սերմանումին յարմար չ'է. կամ պէտք է սպասել որ բարեխառնութիւնը չափաւորի, և կամ գաւազանիկով մը վերէն վար մէկ քանի տեղեր ծակեր բանալու է, որպէս զի տաքութիւնը անոնցմէ դուրս ելլելով, կամաց կամաց պահանջուած աստիճանին մօտենայ: Նրբ բարեխառնութիւնը 25 աստիճանին մօտերը կը գտնուի, և քիչ շատ հաստատօրէն կը մնայ առանց յանկարծական բարձրացումի, այն ատեն կրնաք միայն տեղաւորել ձեր սնկասերը:

Նրբեմն՝ պարտէզի հին խաւիղներու մէջ, ինչպէս և աղբակոյտերու եղերքները կամ մէջերը պատահաբար ակարիգի ձերմակ կը գտնուի, զորս կարելի է գործածել. բայց որովհետեւ մօտեւոր վարժութիւն ունենալու է աղէկը կամ գէշը ճանչնալու համար. չ'ենք կրնար յանձնարարել անոնց գործածումը իրրեւ սերմ. մանաւանդ որ՝ առաջուց նոյն ինքն սուռկը շարցնելով և փշրելով պատրաստուած ձերմակը՝ 2—3 տարի մնալէ վերջը աւելի շուտ և աւելի վտահօրէն կ'արտադրէ. ուստի՝ աւելի լաւ է գէթ սկսելու համար, Ներոպական վստահելի տունէ մը ծախու առնել սուռկի ձերմակը, որ կըրնաք գործածել առանց կասկածելու:

Սուռկի ձերմակը խաւիղին մէջ թաղե-

է 2—3 օր առաջ՝ չափաւորապէս գաղջ (շւշ) ջրով տամկացուցէք (շէճէ՛նէ՛ք) աղբակոյտը, առանց սակայն չափազանցօրէն թրջելու. այս կերպով աւելի վստահ կ'ըլլաք յաջողութեան մասին:

Ահաւասիկ թէ ի՞նչպէս տնկելու է սունկի ճերմակը:

Սունկի ճերմակի պարփոխմանը կտրուելու է 10—15 հ. մեթր երկայնութեան վրայ 1—1½ հ. մեթր հաստութեամբ և 5 հ. մեթր լայնութիւնով. այս կտորները տեղաւորելու է խաւիղին երեսները, իրարմէ 25—30 մեթր հեռաւորութիւնով: 50—60 հ. մեթր բարձրութիւն ունեցող խաւիղներուն վրայ 2 կարգ աւնկելու է, և ուշադրութիւն ընելու է որ մէկմէկու դէմ տնկուած չըլլան. վարի կարգի տունկերը ճիշդ վերիններուն մէջտեղէն սկսելով, որ հնգաշար ձեւ մ'առնէ, ինչպէս ըսած էինք ծնեբեկի համար: ճերմակի կտորները պէտք է մխել ամբողջ իրենց երկայնութեամբ խաւիղին թանձրութեան մէջ, ձախ ձեռքով աղբը վեր առնելու է, և աջով ալ տեղաւորելու է զանոնք:

Եթէ խաւիղները հաստատ և յարմար բարեխառնութիւն ունեցող տեղ մը դրած էք, այլ եւս ուրիշ գործ չի մնար ընելու, բայց եթէ սպասել որ ակարիգները բողբոջին, իսկ եթէ բացօդեայ տեղեր կը գտնուին խաւիղները, պէտք է այն ատեն խոտով և փոխաթով (խոփ) ծածկել վրան. որպէս զի՝ ըստ կարելոյն ներքին տաքութիւնը պահպանուի:

Եւ եթէ բոլոր հրահանգները ուշադրութեամբ գործադրուած, և պարագայներն ալ նպաստաւոր են, սունկի ճերմակը տնկարկումէն 7—8 օր վերջը կ'սկսի բողբոջիլ. այս միջոցին պէտք է խաւիղները աչքէ անցունել, և անոնք որ չ'են բուսած, պէտք է իրենց տեղը նորեր տնկել: Հասկնալու համար թէ, տնկուած ճերմակը բռնած է թէ ո՛չ, պէտք է նայիլ որ, տնկուած տեղը (աղբին տակ անշուշտ) ցանցի նման ճերմակ և բարակ թելեր սկսած են երեւիլ. եթէ կայ՝ բռնած է, հակառակ պարագային, անոնց տեղը ու-

րիշեր տնկելու է: Տնկարկումէն 15—20 օր վերջը, սունկի ճերմակը՝ խաւիղին ամեն տեղը տարածուած կ'ըլլայ. և իր բողբոջները ամեն կողմէն կ'սկսին երեւիլ: Այն ատեն, պէտք է ամբողջ խաւիղը հողով ծածկել, կամ աւելի ճիշդը ըսելու համար՝ ծեփելու է:

Այս գործողութեան ամենէն յարմարագոյնները, թեթեւ հողերն են, որ գործածած ստեննիդ պէտք է թեթեւապէս տամկացնել, առանց սակայն թրջելու. հողին կրնաք մարած կիրի (+բէճ) և կամ գաճի (աւջ) փոշի խառնել, և հողը տամկացնելու համար ալ գոմէղ (շէրշէն, աղբի սեւ ջուրը) գործածել: Հողի այս ծածկոյթը պէտք է 2 հ. մեթրի չափ ըլլայ, և ուժով մը աղբակոյտին փակցնելու է: Թէեւ ակարիգի խաւիղները չ'են ջրեր, բայց երբ կը տեսնէք թէ չափէն աւելի կը չորնան անոնք, մերթ ընդ մերթ չափաւորապէս ոռոգելու է:

Մեփումէն մէկ քանի շաբաթ յետոյ տկարիգները կ'սկսին երեւիլ, և այնչափ շուտ, որչափ խաւիղներու տաքութիւնը նպաստաւոր ըլլայ (25—30 աստիճան), Երբ սկսիք հասած սունկերը քաղել, պարապ մնացած տեղերը ծեփելու է միւսնոյն հողով, որ վերը ցուցինք պատրաստութեան եղանակը: Այս կերպով մինչեւ 3—4 ամիս, շարունակ կրնաք սունկ քաղել ձեր խաւիղներէն: Բայց արտադրութիւնը կրնաք աւելի երկարատեւ ընել, մերթ ընդ մերթ գոմէղախառն ջրով ոռոգելով: Եւ եթէ ոռոգելու ջուրը 20—30 աստիճան տաքութեամբ տրուի, հետեւութիւնը աւելի աղէկ կ'ըլլայ. բայց ոռոգումը ուշադրութեամբ ընելու է որ, սունկի նորածիլ բողբոջները չ'աղտոտին կամ չի վնասուին:

Ամառ ատեն կարելի է դուրսը բաց օդին սունկի խաւիղներ պատրաստել. բայց միշտ վրանին ծածկելով լոյս տեսնելէ արգիլելու է:

Ղ. ԲՈՒՍ

ՊԱՐՏԻՉՊԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Խլուրդ (էփօսթեպէկ կամ եւր սրջանը)

Ա.

Ձեզմէ շատեր կը փափաքին անշուշտ դտնալ միջոց մը, որով կարելի ըլլայ այդ կենդանիները 'ի սպառն անհետացնել ձեր արտերուն կամ պարտէզներուն մէջէն, ուր շատ անգամ մեծամեծ փնասներ կը պատճառեն։ Շատ միջոցներ առաջարկուած են այս մասին, բայց ամենն ալ դժուար եւ երբեմն ալ անկարելի։ Հետեւեալը դիւրին, ազդու եւ անվրէպ է։

Գիտնալու էք անշուշտ որ խլուրդը շատ կ'ախորժի երկրայր կոչուած գետնի որդեբէն (սօղլածան)։ Ուստի՝ ձեր պարտէզին խոնաւ տեղերէն փորելով ժողուցէք անոնցմէ, եւ դրէք վրան դոց տեղ մը մինչեւ 24 ժամ, որպէս զի կերած հողերնին դուրս հանեն։ Ետոյ ջուրի միջակ գաւաթի մը պարունակութեան չափ որդի համար, 10 տրամ ործընկոյզ՝ (ֆալկալի-փէ) որդերուն հետ մասնաւոր ամանի մը մէջ դրէք, եւ թողուցէք այսպէս մինչեւ 12 ժամ։ Այս կերպով պատրաստ պիտի ունենաք խլուրդներուն համար, համեղ կերակուր մը, որ սակայն իրենց մէջ սոսկալի թոյն մը կը կրեն։ Առէք հիմա այդ որդերը, եւ փայտէ ունելիով մը բռնելով, խլուրդներուն գետնափոր ճամբաներուն մէջ դրէք։ Բայց չի մոռնաք որդերը զետեղելէդ վերջը, հողի կոշտով մը կամ քարի կտորով մը գոցել այն ծակերը, ուրկէ իջուցիք որդերը ներքնուղիին մէջ։ Որովհետեւ՝ խլուրդը շատ խորամանկ կենդանի մ'ըլլալով, երբ որդին եղած տեղը լոյս տեսնայ, կը կասկածի եւ երբէք չի մօտենար անոր։ Հարկ չի կայ այլ եւս ըսել թէ, երբ խլուրդը ուտէ այդ թուշաւոր որդը, իսկոյն շանթահար պիտի սատկի, եւ դուք պիտի ազատիք վերջնականապէս այդ անախորժ այցելուէն։

Լ. ԲՈԼՍ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

Ծաղիկները բարձր պահելու համար

Ծաղիկեփունջին վրայ թեթեւօրէն ջուր

սրսկեցէք, ու օճառաջրով լեցուն ամանի մը մէջ դրէք։ ամն առաւօտ հանեցէք օճառաջրէն եւ դրէք շեղակի մաքուր ջուր պարունակող ամանի մը մէջ այնպէս որ կոթերը ամբողջ ջուրին մէջ ըլլան։ Ուր պէտք է մնայ երկու վայրկեանի չափ, քետոյ նորէն թեթեւապէս ծաղիկներուն վրայ ջուր սրսկեցէք՝ եւ կրկին օճառաջրին մէջ դրէք։ Այս կերպով նոր քաղուած ծաղիկներու պէս թարմ կ'երեւին։ Ամեն 3 օրը անգամ մը օճառաջրը փոխելու է, որով ծաղիկները առ նուազն ամիս մը կը դիմանան։

Մօրիւ ձկան լեարդիւղէն (պալլըգ եփըր) անախորժ համը վերցնել

Ամեն մարդ գիտէ թէ՝ մօրիւ ձկան (բրաշալ) լեարդի իւղը, օգտակար դեղ մ'է։ Կարգ մը հիւանդութիւններէ տկարացած անձանց, եւ մասնաւորապէս տղայոց համար, բայց որովհետեւ իր ծանր համը եւ հոտը շատերուն նողկանք կը պատճառեն։ Եւ հետեւաբար դժուարութեամբ կը խմեն։ Եւսացուածին չափ օգտակար չի կրնար ըլլալ։ Ուստի յարմար դատեցինք, հոս մէկ քանի միջոցներ ցուցնել ազնիւ ընթերցողաց, որոնցմով կարելի կ'ըլլայ, անոր համը եւ հոտը վերցնելով դիւրատար ընել։ Ահաւասիկ թէ ինչ կը զուրցէ այս մասին Սիւան Բաւլի անուն թերթը։

Մօրիւ լեարդի իւղը նեխամէտ (փոփոքնաշալ) տարրերէ զատ՝ կը պարունակէ նաեւ կենդանի մածոյց։ (gelatine animale Բաւլի) որոնք իւղին ծանր եւ զգայութիւն (փոփոքնաշալ) յատկութիւն մը կուտան։ Եթէ ունէ միջոցով այդ նիւթերը իւղին մէջէն հանուին, այն ատեն իր այդ յատկութիւնները բոլորովին կը փոխէ եւ ամեն ոք դիւրաւ կրնայ խմել։

Մաքուր ամանի մը մէջ տաքցուցէք իւղը, եւ վրան աւելցուցէք աղաղի (Բաւլի, որ կաղնիի փոշիէն կամ անոր յատկութիւնները ունեցող ծառի կեղեւներէն կը հանեն) կամ գիւթորի (Գաւլ) խաշուկ, որ մեծ քանակութեամբ աղաղ կը պարունակէ։ Այս վերջինը միանալով մածոյցին հետ կը կարծրացնէ եւ ծանրանալով յատակը

կ'իջնայ. մինչդեռ իւրը մաքրուելով կը կենայ երեսը: Իսկ գէշ հոտը բարեփոխելու համար, խառնեցէք իւրին այս անգամ կիրի քլորուկի (chloride de chaux) ջրով թեթեւ լուծային մը. եւ վերջացուցէք գործողութիւնը. ամբողջը պարզուտէ մ'անցնելով:

2. Բրաճուկի լեարդի անուշահոտ իւր պատրաստելու համար. առէք 100 կոամ բրաճուկի լեարդի եւլ. խառնեցէք հետը մէկ կոամ էօքալիւթիւսի իսկուլթիւն (esence d'eucalyptus): Այս կերպով ձկան իւրը բոլորովին իր համը եւ հոտը կորսնցնելով (որ կը պահէ սակայն իւր յատկութիւնները). խմուելէն վերջ միմիայն իսկուլթիւն համը կը մնայ բերնին մէջ:

3. Բրաճուկի իւրի կաթնաթոյր օշարակ
Բրաճուկի լեարդիւր 50 կոամ
Մաղած բարակ շաքար 120 »
Փոշիացած արաբական խէժ 5 »
Գաղի խէժ փոշիացած (քիթրէ, gomme adraganté) 5 »
Սուրճի ջեռաթուրմ (infusion de café) 200 »
Ռօմ կամ քիրշ (կեռնուլ) 100 »

Նախ սանդի մը մէջ խառնեցէք իրար շաքարը եւ խէժերը. յետոյ իւրը եւ ջեռաթուրմը կռնելով խառնեցէք իրարու յարմար շիշի մը մէջ, ցնցելով լեցուցէք այս վերջի խառնորդէն մաս մը սանդին մէջ, եւ արագօրէն յարեցէք: Կռնեցէք ռօմը եւ աւելցուցէք շիշին մէջ մնացած իւրախառն սուրճի ջեռաթուրմին, ցնցեցէք շիշը լաւ մը, որպէս զի իրար խառնուին. եւ յետոյ սանդին մէջի խառնուրդին կերցուցէք քիչ քիչ. երբ գործողութիւնը կատարեալ ըլլայ. լեցուցէք վերջնականապէս շիշին մէջ եւ գործածեցէք: Երբ ուզէք որ վերոյիշեալ կաթնաթոյր լեարդիւրը. աւելի հեղուկ ըլլայ քան թանձրածոր, գաղի խէժին տեղ, խառնեցէք բոլորովին արաբական խէժ, սակայն գործածած ատեննիդ շիշը լաւ մը ցնցեցէք, որովհետեւ հանդարտ կեցած ատենը իրարմէ կը բաժնուին:

ԱՐԱՔՍ

ԽՈՀԱՆՈՑԻ ԲԱԺԻՆԸ

Խեցիի բլաֆի

Խեցիները մաքրելէ՛ք վերջ, դրէ՛ք սանի մը մէջ քիչ մը ջուրով տաքցուցէ՛ք մինչեւ

որ բերանները բացուին, հանեցէ՛ք իրենց կեղեւներուն մէջէն. ջուրը պարզուտէ (սիւլէ՛ճ) անցուցէ՛ք. եւ դրէ՛ք խեցիներուն հետ մէկտեղ սանի մը մէջ ու լաւ մ'եփեցէ՛ք. վերջը աւելցուցէ՛ք վրան քիչ մը ձերմակ գինի, պտղունց (խալա՛ճ) մը խիստ մանր ջարդուած ազատգեղ. պղտիկ կտոր մը կարաղ. աղ, պղպեղ. քիչ մը լօլեկի խիւս (սալա՛ճ) պտղունց մը մէկընկոյղ (սիւսա՛ճ ճէլէլէ՛ճ) եւ երկու ապուրի դգալ սխտորի ջուր: Հացը շերտ առ շերտ կըտրեցէ՛ք եւ այնչափ քառակուսիներու վերածեցէ՛ք որչափ որ խեցի ունիք, կարաղի մէջ տապկեցէ՛ք հացերը ու յետոյ շարեցէ՛ք պղտիկ ափսէի մը մէջ. ամեն մէկին վրայ դրէ՛ք մէկմէկ խեցի. եւ վերոյիշեալ համեմանքին (սալա՛ճ խալա՛ճ) վրայ աւելցուցէ՛ք պէտքին չափ. 2 կամ աւելի հաւկիթ եւ աղէկ մը զարկէ՛ք որ իրար խառնուին, լեցուցէ՛ք այժմ ափսէին վրայ. ու դրէ՛ք մաղմաղ կրակին, որ քիթքիթայ:

ՏԱՆՏԻԿԻՆԸ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՒՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Թիւ 3. — Պ. Աճառեան — Գառնա-նասունկի մշակութեան մասին տես էջ 58:

Թիւ 4. — Պ. Վահան Փափաղեան — Մեզ կը հարցնէ թէ՛ ծաղիկներուն աղտոտ ջուր տալը օգտակար է թէ՛ ոչ: Պատասխանը յաջորդով:

Թիւ 5. — Պ. Գէորգ Տէօվէթեան — Կը հարցնէ թէ՛ բլաղինը՝ հալեցնելու գիւրութիւնը ո՞րն է:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ԿԻՐԱՍՈՆ — Ա. — Շնորհակալութիւն. թերթերը կ'ստանաք:

ՌՈՒՍՃՈՒԳ — Գ. Տ. — Ստացայ, լաւ, կ'սպասեմ ձեր յանձնարարութեան:

ԱՅԻՈՆ ԳԱՐԱ-ԼԻՍԱՐ — Ս. Ս. — Շնորհակալութիւն, ձեր փափաքին համեմատ թերթերը կը զրկուին, ձեր գործակալութիւն կը չնչնէ՛ք ձեր կամքին համեմատ:

ՌՕԹՈՍՏՕ — Մ. Խ. Մ. — Այո, սիրով կ'ընդունինք, հաճեցէ՛ք զրկել ձեր յիշած յօդուածը:

ԽԱՐԲԵՐԴ — Խ. Բ. — Շնորհակալութիւն, տեսէ՛ք առաջին թիւին մէջ մեր պատասխանը. թերթ կ'ստանաք 1—4:

ՍԱՄՍՈՆ — Կ. Ս. — Շնորհակալութիւն. ստացանք նամակնիդ:

ԱՐՏՈՆԱՏԵՐ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Կ. Պոլիս, Մերձան փողոց թիւ 57

Հաստատու 1805

ԴԱՍԱԿԱՆ ԳՐԵԱՆՔ

Մանկանց գիրքը կամ Հարպիկի բերական պատկերազարդ. բոլորովին նոր ոճով, Հատը 5 փարայ:

Մարգարիտներ, Մանկապարտեզի-Մաղիոցի մանուկներուն համար. կ'ուսուցանէ բազմաթիւ ձեռագիր օրինակներու վրայ կարգաւ գրել, եւ կը բովանդակէ երգեր, խաղեր, առակներ եւ հանելուկներ: Գին 40 փարայ:

Սիրուն զբոսարան, Մանկանց երկրորդ գիրքը, կը պարունակէ մանկական երգեր, կարճ հատուածներ, առակներ, բարոյալից փառքիկ պատմութիւններ եւ առածներ: Ը տիպ. Գին 2 դր:

Ոսկեմատենիկ Հայ տղայոց. երկրորդ գիրքը ընթերցանութեան. Գ. տպագրութիւն 120 պատկերներով. կը բովանդակէ բարոյական զեղեցիկ պատմութիւններ, ստանաւորներ, երգեր, առակներ, կրօնական եւ դիտական ամենակարեւոր գիտելիքներ, եւայլն: Գիրք մը՝ արժանի իր անուան եւ պիտանի ամէն հայ տղայոց: Գին 4 դրու:

Մանկավարժական բերակ սնուքիւն պատկերազարդ. մասն Ա. Բ. կ'ուսուցանէ՝ պատկերներու վրայ՝ հայ լեզուի քերականութեան նախագիտելիքը եւ ութը մասունք բաժնի 100է աւելի մեծ եւ փոքր պատկերներու վերայ: Գին լաթակազմ Ա. մասի 50 փարայ. իսկ Բ. մասի 100 փարայ:

Սրբազան պատմութիւն հին եւ նոր Կտաւ կարանի, պատկերազարդ. 2. տպագրութիւն. նախնական կարգերու համար ամբողջ դասագիրք մ'է: Գին 100 փր:

Գեղեցիկ զբոսարան տաճկախօս տղայոց, կամ Վարժութիւն հայ խօսակցութեան եւ ընթերցման. Ա. եւ Բ. տարի. պատկերազարդ: Փորձով հաստատուած է թէ մէկ տարուան մէջ տաճկախօս տղայք կը կարգան ու կը խօսին հայերէն: Գին Ա. մասի 100 փր. Բ. մասի 3 դր:

Մարմամարզութիւն առողջապահական եւ բժշկական, առանց, կանանց եւ փոքր տղայոց. առանց գործիքի. բոլոր վարժարաններու յարմար: Գին 4 դր:

Հայեցեան լեզու կամ վարժութիւն գրաբարի, Ռուսերէնի գրութեամբ բոլորովին նոր ոճով. Գին 4 դր:

ՏՕՔ. Գ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Որ 25 տարիներէ ի վեր զինուորական եւ քաղաքային հիւանդանոցներու մէջ պաշտօն վարած է, պատիւ ունի ծանուցանել թէ այս անգամ իւր բնակութիւնը հաստատած է Գատը-Գիւղ Պատեմ փողոց, Թիւ 12. ուր հիւանդ կ'ընդունի ամէն օր, ի մասնաւորի աչքի հիւանդութեանց. իսկ Զորեքչաքթի եւ Ուրբաթ օրերը կը դառնուի Հայոց եկեղեցւոյ դիմաց Զպուքճեան Լեւոն Էֆէնտիի հանրածանօթ Գեղարանը, եւ հոն իրեն գիմով աչքատ հիւանդները ձրի կը դարմանէ:

8-10



ՀՈՆԿ-ՔՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ ՊՈԼԻՍ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՏԱԳՈՒԼԵԱՆ

ձեռք Պէյ խանի դրան կից, թիւ 10

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդարձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կողմերը: Գաւառներու յանձնարարութիւնները փութով եւ խնամով կը կատարուին:

Զինական, Հնդկական, Ճափայի եւ Սէյլանի էն ազնիւ թէյերն ուղղակի բերուած, կը գտնուին հոն:

Զգուշանալ տոյն վաճառանիչին կեղծերէն:

Փնտռել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՏԱԳՈՒԼԵԱՆ Ստորագրութիւնը:

Հանրագիտակ կը հրատարակուի ամեն Շաբաթ օր կանոնաւորապէս :
 Կը պարունակէ Գրական, Գիտական, Երկրագործական, Տնտեսական, Արհեստական, Եւայլն, եւայլն. շահեկան նիւթեր :
 Երկրագործական, Արհեստական և Իրաւաբանական հարցումներու միշտ պատասխանելը կը սրուն մասնագէտներու ձեռքով :
 Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ

Տնօրէն—Խմբագրապէս Ղ. ԲՈԼԱՏ

Կ. Պոլիս, Մաքմուս վաւա, Բիւրճիկ խոն Արամեան Տպարան, քիւ 26

Թիւրքիս վերաբերեալ մնայեալ գործառնութեանց համար ղիմել

Գրավանառ ՄԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՀՐԱՄ ԷՖԷՆՏԻԻ

Կ. Պոլիս, Մէրհան Զարբոյք քիւ 57

Հանրագիտակ պատրաստ է ընդունիլ ամեն տեսակ ծանուցումներ, ազգաբարձրութիւններ, խիստ դիւրամառչելի պայմաններով : Հրատարակիչներէ կը խնդրուի իրենց երկերէն զրկել երկու օրինակ, զոր պիտի ազդարարենք հաստատութեան, կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը :

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Այնրապ. — Գարեգին էֆ. Պօղարեան
 Ասաբազար. — Ստեփան էֆ. Սափրիչեան
 Արաքիլի. — Յ. Պ. էֆ. Մանուէլեան
 ԳՈՒՐՏ—Պէլիկ. Արժ. Տ. Ստեփան քահանայ
 Մկրեան
 Գանիիւ. — Մ. Պաղտատար էֆ. Ս. Նաթանեան
 Էրզրում. — Եղ. էֆ. Տ. Ազարեան
 Թեհրան. — Կարապետ էֆ. Բարսրեան
 Իզմիր. — Կարապետ էֆ. Մալէճեանեան
 Իզմիս. — Աբրահամ էֆ. Կոռնէեան
 Մալկարա. — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան
 Խաբեբդ. — Խոսրով էֆ. Քէչիչեան

Կէլիպօլու. — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
 Կիւասոն. — Արմենակ էֆ. Սօմունճեան
 Մարաշ. — Արժ. Տ. Յովհաննէս քահանայ
 Վարժապետեան
 Մանչեսթր. — Յակոբ էֆ. Բողատեան
 Մուշ. — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան
 Պանսքումա. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
 Պարսիզակ. — Վահան էֆ. Ճիւղնի
 Պրուսա. — Օննիկ էֆ. Լուծֆեան
 Ռոստոք. — Յովհաննէս էֆ. Տէմիրեան
 Սամսոն. — Կարապետ էֆ. Սէֆէրեան
 Սրվազ. — Յ. էֆ. Գարակէօղեան
 Տրապզոն. — Սահակ էֆ. Էթմէքճեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրալաճառաց քով, մասնաւորաբար

Սամաթիա, Կոյարանը թիւթիւնճիւ Արթին ազալի խանութը :
 Մագրի-Գիւղ, Պօղոս էֆ. Ազնաւորեանի խանութը :
 Գատը-Գիւղ, Լեւոն էֆ. Զպուքճեան Դեղարանը :
 Սկիւտար, Փիշիմօֆճեան էֆ. խանութը :
 Բերա, Մեծ փողոց Դառնիկ էֆ. Կիւլէբեանի խանութը :